



Հ. ԱՐԱՄՅԱՆ

ԶՐՈՒՑՑ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Բոլոր նրանք, ովքեր 1945 թվականի ամռանը Սովետական Հայաստանի, Սովետական Միության և Սփյուռքի գանազան թեմերից եկել էին եջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետության թափուր գահին համար գահակալ ընտրելու պաշտոնով, պաշտոնական ժողովներում և անպաշտոն հանդիպումների ընթացքին, մոտից ծանօթանալուց հետո Ազգընտիր Տեղակալի հմայքուանձնավորության և հայրենանվեր, ժողովրդանվեր, ժողովրդանվեր բազմություն գործունեության հետ, կողմնորոշվեցին իսկուն և եթ. յուրաքանչյուր պատգամավոր՝ իր սրտի և խղճի խորքում որոշած էր արդեն իր ընտրելին—և այդ ընտրելին միմնուն անձնավորությունն էր բոլոր սրտերում, բոլոր խղճերում, բոլոր գիտակցություններում։ Այսպես է, որ 111 պատգամավորների միաձայն հավանությամբ և միահամուռ կամքով ընտրվեց Գեր. Գերորդ Զյորեցյան Արքապիսկոպոս—Գերորդ Զ. Հայրապետ։ Այսպիսի միաձայն և միահամուռ ընտրություն, ինչպես քանիցն նշվեց այն օրերին, աննախընթաց էր Հայոց Հայրապետական ընտրությունների տարեգործությանց մեջ։

Բոլոր պատգամավորները և հյուրերը, —որոնց թվում և այս տողերը գրողն էր, — վերադարձան իրենց տեղերը՝ Հայրապետական ընտրության հարցին լավագույն լուծումը տված լինելու գոհունակությամբ՝ առցուն, համոզված, որ հանձին նորընտիր Վեհին, Հայոց ժողովուրդը կունենա իր հայրապետների երկարածիւգ շարքում ամենաընտիրներից, ամենամեծերից մեկը։ Բոլոր պատգամավորները մերադարձան իրենց տեղերը՝ «ուսկելու ակնկալություններ» կապած Գերորդ Զ.ի անձնավորության հետ, ինչպես նշվում էր Հայրապետական անդրանիկ կոնդակում։

Ել Վեհափառի հետագա հինգ տարիների կեցվածքն ու գործունեությունը ցույց տվե-

ցին, որ պատգամավորները լավագույն և ճշտագույն ներշնչումն էին ունեցել՝ և իրենց ընտրության և՛ ընտրած անձնավորության հետ կապված «ուսկելու ակնկալություններ»ի մեջ։

Գերորդ Զ. Կաթողիկոսի գործունեության ամենավայրուն հանգրվանը, նրա կյանքի ամենաշքեղ կրթողը՝ ժամանակագրականուրեն զետեղվում է իր ընտրությունից ոչ շատ ժամանակ առաջ. —այն հանդիպումը, որ նա ունեցավ ժողովուրդների հանճարեղ Առաջնորդ Ստալինի հետ Կրեմլում։

Բայց Քիչ փայլուն չեն նաև նրա գործունեության հանգրվանները՝ և իր ընտրությունից հետո։

Չիստենք Վեհափառի աշալուրը հսկողության և սրտագին հոգատարության մասին՝ ինչ վերաբերում է Մայր-Աթոռի պայծառացման, Հոգևոր Ճեմարանի պահպանման և զարգացման, «Էջմիածին» ամսագրի հրատարակման, թեմերին ցույց տրված ուղիղ և մշտարթում դեկափարության։ Դրանք, եթե հնարավոր է ասել՝ «նեղ-մասնագիտական» պարտականություններ են, իր պաշտոնին սովորական և առօրյա կիրառումները։

Խչ որ Վեհ. Գերորդ Կաթողիկոսի ծշմարիտ փառքն է կազմում և նրա իսկական մեծությունը, որ այն կեցվածքն է, որ նա ունեցավ համազգային պատմական մեծ դեպքերի և շարժումների կապակցությամբ, համամարդկային մեծ երևույթների տառչությամբ։

Այդ հանգրվաններից, այդ կեցվածքներից հիշատակենք մի քանիսը միայն։

Երկրորդ համաշխարհային պատերազմի վաղորդայնին, երբ Հայկական դատը վերարծարծվեց, պատմական մնալու սահմանված է այն հուշագիրը, որ Վեհափառը արդ առթիվ ուղղեց երեք Մեծերի Արևոտքին գործերի մինիստրներին, որոնք 1945 թվականի

դեկտեմբերի 16—26-ին գումարվել էին
Մոսկվայում:

Հայկական արդար Դատի վելարձարձման հետ նույն օրերին, և մասամբ դրան կապակցված, ծագեց Սփյուռքի հայերի Հայրենիք վերադարձի հարցը. սկսվեց արտասահմանյան հայերի Հայրենադարձության մեծ շարժումը:

Մի բոցաշումը հայրենասեր, մի արծվեհայաց անձնավորություն, ինչպիսին Ամենայն Հայոց Հայրապետն է, մի՛ թե կարող է՞ս անտարբեր համարիսատես լինել նման պատմական մի մեծ շարժումի հանդեպ: Ո՞չ ինարկե: Եվ նա հենց իր առաջին Ընդհանրական կոնդակում, որ ստացվեց արտասահման 1946 թվականի ամառնամուտին, գրում էր այնքան սրտառուշ կերպով.

«Փիտի տեսնեմ արդյոք օտարության մեջ ցան ու ցրիվ ընկած հայությունը համախմբված իր հայրենի երկրում՝ Խորհրդային Հայաստանի իշխանության ներքո, որ աչք փաղաղ գոցեմ, հոգուս և մարմնիս հանգիստ տամ և հայ ժողովրդի ողորմիսը լսեմ»:

Ինչ վերաբերում է Հայրենադարձության մեջ շարժումին, Վեհափառը իր այս առաջին Ընդհանրական կոնդակի ակնարկությամբ քավարարվեցավ, այլ հետագային հատուկ կոնդակներով, նաև ակներով և հեռագրերով ցույց տվեց, թե այս շարժումը ինչքան մոռէ է իր սրտին:

Վեհափառը, եթե լավ և հայրենասեր ՀԱՅ է և որպես այդպիսին չէր կարող անտարբեր հանդիսատես լինել հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված մեծ շարժումների, նա, դրա հետ զուգահեռ, լավ մարդ է, մարդասեր մարդ, և որպես այդպիսին, չէր կարող, ինարկե, անտարբեր մնալ համայն մարդության ճակատագրի հետ կապ ունեցող մի շարժման հանդեպ, որ խաղաղության մեծ ու հարածուն շարժումն է: Ի հեճուկս պատերազմի հրձիկներին և «քաղաքակիրթ» պիտակ ունեցող մարդակերներին:

Եվ Վեհափառի համագույշին և համամարդկային նշանակություն ունեցող ակնառու մեկ կեցվածքն է ան պատմական դիմումը, որ նա արեց խաղաղության օգտին, Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիի ու Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատի հետ միասին:

Վեհափառ Գեորգ Զ.ի՝ այդ պայմանու հայրենասերի, խորաթափանց մորի, լայնահայաց անձնավորության, արծվային հայացքով հայության բոլոր հորիզոնները զնոնդ և Սփյուռքի բոլոր խմբիրներին և գործիչներին վերաբերմաքը զարմանալիորեն ճիշտ և լայն ճանաշում ունեցող Հովհաննեսի հետ գրուցը, հոգիկան և մտային ճշմարիտ հաճույք է ինձ համար: Եվ առիթից առիթ բախտ եմ ունենում վայելելու այդ հաճույքը:

Էջմիածնի Վեհարանում, Ռուսաց Պատրիարքի և Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի Էջմիածնին այցելությունից մեկ քանի օր Շիտո այցելում եմ Վեհափառին,

Ո՞վ կասեր, սեսնելով նրա ուղղորդ և պարթե հասակը, ուժեղ և առույգ կազմը, հանդիսավորն բայց աշխատված շարժումները, և լսելով նրա խորը խմաստությամբ և զարմանայի ողջմտությամբ ու մարդկանց ու իրերի ճանաչողությամբ թաթավուն խոսքերը, որ գտնվում է սպասումներկու ամբա մի անձավորության ներկայությանը:

Մերումազարդ, ծավալուն կինսափորձ ունեցող մարդու իմաստություն և երիտասարդական ավյուն և աշխատված—ահա՝ ինչպիսին է մեր Հայրապետը:

Հուրբասիրվում ենք Հայրենի երկրի սփառչելահամ մրգերով՝ հենց էջմիածնի սեփական այգիներից բերված, կարկանդակներով, սուրճով: Եվ զրուցում ենք երկար՝ Հայրենի աշխարհում անդուզ և հարաճուն թափով տեղի ունեցող շինարարության մասին, կուտակական և տնտեսական կյանքի շարունակական վերելքի մասին, Հայրենադարձ հայերի զանազան բնագավառներում իրագործած հաջողությունների մասին, նրանց տրնտեսական կենցաղային պայմանների հարաճուն բարեկալման մասին, Սփյուռքի պանդում հայերի աննախանձելի փայությանց և բոլորին Հայրենիքում մեկտեղելու ցանկալիության մասին: Այս բոլորը շատ հետաքրքրական է: և համեմի: Բայց այսօրվա իմ այցելությունը ունի հատուկ նպատակ: Հայտնի է ինձ ներկա տարվա օգոստոսի 4—5-ին Վրաստանի մայրաքաղաքում, Հայոց Հայրապետի, Համայն Ռուսաց Պատրիարք-Կաթողիկոսի խորհրդաժողովը, և նրանց միացյալ վիճումը՝ խաղաղության օգտին: Գիտեմ, որ այդ դիմումը մամուլի միջոցով հանրային սեփականություն կպառնա: Բայց ես ցանկանում եմ լսել Հայոց Ընդհանրական Հայրապետի կինդականի Պատգամը Խաղաղության և Պատերազմի հարցի մասին, որը ներկա բոլորին:

Վեհափառի Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի խորհրդաժողովը, և նրանց միացյալ վիճումը՝ խաղաղության օգտին: Գիտեմ, որ այդ դիմումը մամուլի միջոցով հանրային սեփականություն կպառնա: Բայց ես ցանկանում եմ լսել Հայոց Ընդհանրական Հայրապետի կինդականի Պատգամը Խաղաղության և Պատերազմի հարցի մասին, որը ներկա բոլորին:

զբաղեցնում է ողջ մարդկությանը՝ որպես
ամենաճիշտապ հարցը բոլոր հարցերի մեջ:

— Վեհափառն, — դիմում եմ Գերոդ Զ. ին, —
չե՞իք ցանկանա Զեր Պատգամն ասել Խաղա-
ղովթյան և Պատերազմի Հարցի մասին, որ-
պեսզի այն հասցնենք Սփյուռքի Զեր Հոգուր
զավակներին «Էջմիածին» ամսագրի միջո-
ցով։ Մայր Հայրենիքի Հայերը, որ ունեն
ճշմարտացի և արդարակորով մամուլ և ու-
ժիո, լուսաբանված են այդ հրատապ Հար-
ցում և կողմնորոշված։ Քիտեն, թե ովքը են
պատերազմ ցանկանում և ի՞նչ դրդապատ-
ճառներով։ Նույն պարագայի մեջ չեն
Սփյուռքի Հայերը։ Նրանք կարող են զո՞
դառնալ վաճառված մամուլի ստահող պրո-
պագանդային, և մոլորվել։ Գիտեմ, թե Զեր
խոսքը ի՞նչ հմայք ունի նրանց աշքին։ Կարող
եք Զեր Պատգամով օգնել նրանց կողմնո-
րոշվելու

— «ხევმწამის» ეკუთხილ კოცა თხონით გა-
მართა თაყაფრილია ხნ ნებისმიერ მფრინავის
თხელი ისახვად ძირის მასში; ზრანგ ექ-
მერებამამრ, უფრისობი მხრი გადასახლები კიმა-
ნან, მხ ჩრბნა ჯაკრატის წელს გაკადების
თან ხაղალიშვილის და მათხელოვანის გარეული;
სკონამ ხანა აქვთ, აღმართის
მხელ ასაკამ ხელ ყარების ჩემ გაკადების
განხვას და ხაղალიშვილის აგად
განხვას და ხანა ასაკამ მხ მან ხელ მომ
ჩრბნა ასაკამ ხელ ყარების განხვას
განხვას და ხანა ასაკამ მხ მან ხელ მომ
ჩრბნა ასაკამ ხელ ყარების განხვას

Ներկա պատմությունը պահպանվել է առաջին հայության մեջ՝ կողման կողմէից և առաջին հայության մեջ՝ կողման մի գործությունում:

— Фрієсаптненбопфյонмэр, — зваромашкюаմ է Վեհափառք՝ մի պահ լուելոց հետո; — կովին և մահվան կրոն չէ, այլ խաղաղության և կյանքի; Քրիստոնեական կրոնի Հիմնադրի ծննդի հետ հնչում է և խաղաղության պատգամ. «...և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւնն»; Ըստ Ավետարանի, այսպես են երգում հրեշտակները Քրիստոսի հրաշափառ Ծննդյան օրը: Այդ խոսքերը կրկնվում են Ծննդյան առնի մեր շարականների մեջ: Ուրեմն, խաղաղությունը քրիստոնյա եկեղեցիների առաջին և ամենաէական պատվիրանն է: Բայց միայն կրոնական տեսանկյունից շենք նայում հարցին: Ի՞նչ կրոնական պատկանելիություն էլ ունենանք, ի՞նչ կրոնական համուզմունքների տեր է: լինենք, ամեն բանից անազ մարդ ենք, և որպես այդպիսին՝ շենք

կարող բացասական վերաբերմունք չունենալ հանդեպ պատերազմին, որ մարդկության համար գոյություն ունեցող մեծագույն ազիտն ու շարիքն է: Խաղաղության պայմաններում, բնականոն պայմաններում, ինչ ենք անում, գիտության տրամադրած բոլոր միշտցներով աշխատում ենք փրկել մարդկային կանքեր, բուժել մարդկային վերքեր: Խսկի ի՞նչ է ստացվում պատերազմի պայմաններում. տարիներով գուրգուրանքով մեծացրած երիտասարդության ծաղիկ կյանքը վտանգի ենք ենթարկում: Սակայն պատերազմներում միայն ռազմիկ երիտասարդությունը չէ, որ զո՞յ է լինում, այլ և քաղաքային խաղաղ բնակչությունը՝ երեխաներ, կանայք, ծերունիներ..., առանց հաշվիլու շենքերի, կովալուրական հիշատակարանների, ինչքերի հասցված ավերածությունը: Եվ ի՞նչու այս բոլոր աղետները — որպեսզի մի բուռ աշխարհակաների փառասիրական մոլուցիները և ուրիշ մի խումբ մարդկանց շահութի կիրքը գոհացում գտննեն...:

Իսկ Խաղաղության առավելությունները ակներև են: Խաղաղության պայմաններում, մարդկային կյանքի կորուստ չի լինում. մարդկակ աշխատում են և ստեղծագործում, աշխատում են երկար և երջանիկ ապրել, և այդ՝ յուրաքանչյուր մարդու բնական իրավունքն է: Խաղաղության պայմաններում է, որ տեղծվում են տնտեսական լավագույն կյանքի. կենսամակարդակի հարածուն բարձրացման միջոցներ, ստեղծագործվում են արվեստի, գրականության հրաշակերտներ, հառաջադիմում է գիտությունը: Կան պնդողներ, որ պատերազմը բարիք է, ինչպես, օդինակոմն գեներալ Շասինի...: Բայց այդ պնդումը ամենալազիր ցինիզմն է, և ուրիշ ոչինչ: Կան պնդողներ, որ պատերազմը առաջ է բերում առաջադիմություն, կատարելագործություն: Իսկ ի՞նչ բնագավառում, զենքերի բնագավառում: Այսինքն, կատարելագործվում են մահվան և քանդումների գործիքները: Իսկ դա՛ շարիքի առաջադիմությունն է: Հանդիսանում: Ո՞ւ ինչ կողմից էլ քննենք, պատրագմր միայն և միայն շարիք է ծնում:

Խաղաղությունը միայն հնարավորության
է տալիս երշանիկ կյանքի, ստեղծագործա-
կան թափի, արվեստի հրաշալիքների գեղա-
կերտումնն: Նայեցեք թեկուղ մեր, Հայոց
պատմության! Մեր արքեստի, շինարարու-
թյան, գրականության կոթողները չե՞ն
ստեղծվել այն ժամանակները, եթե մեր ժողո-
վուրդը հարաբերաբար խաղաղ կյանք է: ու-
նեցել: Խսկ սովորական շրջանի երկանու-
տարիներին, ի՞նչու Զառաջադիմեցինք այս
աստիճան և ունեցանք մեծամեծ կենսագոր-

ծումներ բոլոր բնագավառներում: Որովհեակ վայիշեցինք անընդմեջ խաղաղություն, եթէ չաշվենք Հայրենական պատերազմի շուրջ չորս տարիներու: Հասարակա-տնտեսական նոր հասարակակարգում, երբ մարդիկ խաղաղ կյանք ունեն, ընդունակ են հրաշքներ դորժեց:

ԱՀա քրիստոնեական և մարդկային - այս
տեսանկյուններից ենելով է, որ Ռուաց
Պատրիարք Ալեքսի և Վրաց Պատրիարք-
Կաթողիկոս Կալիստրատ եղբայրակիցներին
հայ Թբիլիսիից լսեկի արեցինք մեր ձայնը՝
խաղաղության օգտին, և պատերազմի Հրձիկ-
ների դեմ։ Այս անգամ, մեր կոչն ուղղված է
բացառապես քրիստոնյա եկեղեցներին։

Բայց միայն բրիստոնյաները չեն, որ խաղաղություն են ցանկանում: Ստոկհոլմի Կոռս ցուց տվեց, որ խաղաղության կողմնակից են բոլոր բարի կամքեցողության տեր յարդիկ՝ բուռգայականներ, բարձմանականներ, իսլամներ, կորայիլացիներ և ուղիղներ:

Սովետական Միության սահմաններում
գտնվող քրիստոնյա երեք ինքնուրուց Եկեղիքիների՝ Ռուսաց Եկեղիքու, Հայոց Եկեղի-

ցու և Վրաց Եկեղեցու պետքի ժանոնթությանը և մերձեցումը սկսվեց 1948 թվին, երբ իմ Եղբայրակից Վրաց Պատրիարք-կաթողիկոսը և հո Մոսկվայում ներկա էինք Ռուսական Պրավուլավ Եկեղեցու ինքնուրուցնության 500-ամյակի հանդիսություններին: Թրիլիսիի խորհրդաժողովը՝ ներկա տարվա օգոստոսին, և երկու Հռվիվապետների այցը Էջմիածին, հանդիսացան մեր մերձեցման և գործակցության հատականդիպանները, Ապագային, երեք Եկեղեցիները, պահելով հանդերձ ծիսական-դավանական տարրերությունները, որոնք կազմում են յուրաքանչյուրի ինքնուրուցնությունը, ավելի ևս սերտըն կողմակցեն քրիստոնեական Եղբայրակցության ոգով, և կպայքարեն խաղաղության օպունիաշխարհում, մնալով հավատարիմ իրենց կրոնական ըմբռնումներին և իրենց մարդկային խղճմանքին: Մեր ամենօրյա աղոթքն է, որ խաղաղությունը թափավորի աշխարհի վրա: Մեծ գործ են կատարում խաղաղամերները, օրհնյալ լինեն նորա»:

